

ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ՀԱՆԱԳՄԱՆ ՈՒՇԸ


Posted on November 28, 2009 by keghart.com




Category: [Opinions](#)



Յարութեան Տեր-Դաւիթեանի ելոյթը Թորոնթոյի Նոր Սերունդ Միութեան 30-ամեակին առիթով
Լոսաբաց, 28 Նոյեմբեր 2009

 Թորոնթոյի Նոր Սերունդ Մշակութային Միութեան 30-ամեակն է: Հայ մշակոյթին ծառայող հայկական միութիւն մը, հայրենի հողէն հազարաւոր մղոններ հեռու գտնուող Քանադական հողի վրայ, կը տօնէ իր գործունէութեան 30-ամեակը: Չեմ ուզեր հարց տալ թէ ինչո՞ւ հեռու ենք հայրենի հողէն: Բոլորիս քաջածանօթ իրողութիւնն է: Այլ կ'ուզեմ հարց տալ, թէ որքանո՞վ նպատակայարմար, արդիւնաւետ եւ արդարացուցիչ է այդ գործունէութիւնը, եւ արդեօ՞ք մենք կամ մեզի յաջորդող սերունդները պիտի կարենան տօնել 60-ամեակը, 100-ամեակը եւ կամ աւելին:

Յարութեան Տեր-Դաւիթեանի ելոյթը Թորոնթոյի Նոր Սերունդ Միութեան 30-ամեակին առիթով
Լոսաբաց, 28 Նոյեմբեր 2009

 Թորոնթոյի Նոր Սերունդ Մշակութային Միութեան 30-ամեակն է: Հայ մշակոյթին ծառայող հայկական միութիւն մը, հայրենի հողէն հազարաւոր մղոններ հեռու գտնուող Քանադական հողի վրայ, կը տօնէ իր գործունէութեան 30-ամեակը: Չեմ ուզեր հարց տալ թէ ինչո՞ւ հեռու ենք հայրենի հողէն: Բոլորիս քաջածանօթ իրողութիւնն է: Այլ կ'ուզեմ հարց տալ, թէ որքանո՞վ նպատակայարմար, արդիւնաւետ եւ արդարացուցիչ է այդ գործունէութիւնը, եւ արդեօ՞ք մենք կամ մեզի յաջորդող սերունդները պիտի կարենան տօնել 60-ամեակը, 100-ամեակը եւ կամ աւելին:



